ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, Ֆրոնտիկ Ծենոյանի 64,094900906,
norgeghi.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

09 օգոստոսի 2019 թվականի N 41

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի ԱՎԱԳԱՆՈՒ N 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի Նոր Գեղի համայնքի ավագանին որոշում.

Հաստատել 2019 թվականի օգոստոսի 9-ի N 8 հերթական նիստի օրակարգը.

1. Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի ավագանու 2019 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին
2. Համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 76 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին
4. <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղիի Կոմունալ սպասարկում և բարեկարգում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին
5. Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը, անշարժ և շարժական գույքը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին
6. Նոր Գեղի համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը
7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում իրականացված ստուգումների արդյունքների քննարկման մասին
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ (10) դեմ (0) ձեռնպահ (0)

Վանիկ Սփայյան ________

Անահիտ Առաքելյան ________

Արմեն Բաբախանյան ________

Վահագ Գևորգյան ________

Գագիկ Գևորգյան ________

Վլադիկ Գրիգորյան ________

Սանյա Կիրակոսյան ________

Շիրազի Մամոյան ________

Մարիա Մկրտչյան ________

Նվեյանա Շահինյան ________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 օգոստոսի 2019 թվականի N 42-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Նոր Գեղի համայնքի ավագանին որոշում.

1. Նոր Գեղի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի <<Նոր Գեղի համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 74-Ն որոշման հավելվածի N 6 հատվածում կատարել վերաբաշխում՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

կողմ (10) դեմ (0) ձեռնպահ (0)

Վանիկ Ավալյան________________

Անահիտ Առաքելյան________________

Արմեն Բաբախանյան________________

Վահագ Գևորգյան________________

Գագիկ Գևորգյան________________

Վլադիկ Գրիգորյան________________

Մանյա Կիրակոսյան________________

Շիրակ Մամոյան________________

Մարիա Մկրտչյան________________

Նայիրա Ծնավրոնյան________________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

Հավելված
Նոր Գեղի համայնքի ավագանու
2019 թվականի օգոստոսի 9-ի N 42-Ն որոշման

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի
N 74-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՏՎԱԾ N 6-ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

| Բաժին | խումբ | դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տարեկան հաստատված | Ճշտում փոփոխություն | Ճշտված + / - | Ապառ մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | 0 | 0 | Պահուստային ֆոնդեր | | 10000,0 | -9500,0 | 1400,0 |
| 01 | 1 | 1 | *Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում* | 37693,0 | +2950,0 | 40643,0 | |
| | | 4111 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 35333,0 | +1250,0 | 36583,0 | |
| | | 4112 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 1500,0 | +1000,0 | 2500,0 | |
| | | 4215 | Ապահովագրական ծախսեր | 0,0 | +200,0 | 200,0 | |
| | | 4234 | -Տեղակատվական ծառայություններ | 200,0 | +300,0 | 500,0 | |
| | | 4261 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 400,0 | +200,0 | 600,0 | |
| | | | | | | | |
| *01* | *6* | *1* | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)* | *3000,0* | *+2050,0* | *5050,0* | |
| | | 4239 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 2400,0 | +1000,0 | 3400,0 | |
| | | 4241 | Մասնագիտական ծառայություններ | 200,0 | +850,0 | 1050,0 | |
| | | 4823 | Դատարանի վճարներ | 400,0 | +200,0 | 600,0 | |
| *04* | *5* | 0 | *Տրանսպորտ, որից`* | *1500.0* | *+2500.0* | *4000.0* | |
| | | | Ճանապարհային տրանսպորտ | 1500.0 | +2500.0 | 4000.0 | |
| 06 | 4 | 0 | *Փողոցների լուսավորում, որից`* | *3000,0* | *+2000,0* | *5000,0* | |
| 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 3000,0 | +2000,0 | 5000,0 | |
| | | 4212 | Էներգետիկ ծառայություններ | 3000,0 | +2000,0 | 5000,0 | |
| 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ, այդ թվում` (տող3110) | *10000,0* | *-9500.0* | *500,0* | |
| 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից`* | 10000,0 | *-9500.0* | *500,0* | |
| 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 10000,0 | *-9500.0* | *500,0* | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՊԱՊՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Ծևոսյանի 64.094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 օգոստոսի 2019 թվականի N 43

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 76 ՈՐՈՇՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> 33-րդ հոդվածի՝ Նոր Գեղի համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Գեղի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի <<Նոր Գեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 76 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

կողմ (10) դեմ (0) ձեռնպահ (0)

Վանիկ Ավայան__________

Անահիտ Առաքելյան__________

Արմեն Բաբախանյան__________

Վահագ Գևորգյան__________

Գագիկ Գևորգյան__________

Վարդիկ Գրիգորյան__________

Սանյա Կիրակոսյան__________

Շիրակ Սամոյան__________

Մարիա Մկրտչյան__________

Նաիրա Ծատուրյան__________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

Հավելված
Նոր Գեղի համայնքի ղեկավարի
2019 թվականի օգոստոսի ... N 43 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Նոր Գեղիի համայնքապետարանի աշխատակազմի

Աշխատակիցների քանակը՝ 19

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելում | Հավելավճար | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Նոր Գեղիի համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | | 1 | 360000 | | | 360000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Քաղաքական | | 1 | 230000 | | | 230000 |
| 3 | | Համայնքի ղեկավարի օգնական | Հայեցողական | | 0.75 | 180000 | | | 135000 |
| 4 | | Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար | Հայեցողական | | 0.5 | 150000 | | | 75000 |
| 5 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 230000 | | | 230000 |
| 6 | | Ներքին աուդիտի բաժնի պետ | Համայնքային ծառայության | 2.1.1 | 1 | 207000 | | | 207000 |
| 7 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-1 | 1 | 186300 | | | 186300 |
| 8 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3.2 | 1 | 186300 | | | 186300 |
| 9 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-3 | 1 | 186300 | | 18630 | 204930 |
| 10 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 167670 | | 16767 | 184437 |
| 11 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-2 | 1 | 167670 | | | 167670 |
| 12 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 150903 | | | 150903 |
| 13 | | տնտեսվարող | Տեխնիկական սպասարկման | | 1 | 90000 | | | 90000 |
| 14 | | գործավար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 120000 | | | 120000 |
| 15 | | վարորդ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 150000 | | | 150000 |
| 16 | | պահակ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 75000 | | | 75000 |
| 17 | | [illegible] | Տեխնիկական սպասարկման | | 1 | 75000 | | | 75000 |
| 18 | | հավաքարար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 75000 | | | 75000 |
| 19 | | էլեկտրիկ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 75000 | | | 75000 |
| | Ընդամենը | | | | 18.25 | 3062143 | | 35397 | 2977540 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք.Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2019 թվականի N 44-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի ու 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի՝ Նոր Գեղի համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

կողմ (10) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Վանիկ Ավայան____________

Անահիտ Առաքելյան____________

Արմեն Բաբախանյան____________

Վահագ Գևորգյան____________

Գագիկ Գևորգյան____________

Վարդիկ Գրիգորյան____________

Մանյա Կիրակոսյան____________

Շողայր Սամոյան____________

Մարիա Մկրտչյան____________

Նարինե Շահինյան____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

Հավելված 1
Նոր Գեղի համայնքի ավագանու
2019 թվականի օգոստոսի 9-ի N [illegible]-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1.Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի (այսուհետև՝ համայնքի) կամավոր խնդիրների, դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և այդ լիազորությունների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքի կամավոր խնդիրներն են՝

1) համայնքում սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների (զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների և այլն)հայտնաբերումը և սոցիալական օգնության տրամադրման կազմակերպումը,
2)համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու կազմակերպումը,
3)աջակցություն համայնքում զբոսաշրջային կառույցների և ենթակառուցվածքների ստեղծման, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանը միտված ծրագրերի իրականացմանը,
4)համայնքում երիտասարդության դերի բարձրացումը, երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացումը,
5)աջակցություն համայնքում արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը,
6)աջակցություն համայնքում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը,
7)հանգստի, հանրային վայրերի, մարզական հրապարակների, հանգստի գոտիների խնամքի և պահպանության կազմակերպումը,
8)համայնքի ուսումնական հաստատությունների գործունեության աջակցումը,
9)աջակցություն քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը,
10)սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարության և կապիտալ նորոգման իրականացումը,
11)համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպումը,
12)համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բարելավման աշխատանքների իրականացումը,
13)գյուղատնտեսական զարգացման ծրագրերի իրականացման կազմակերպումը,
14)համայնքում տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերի և նրանց գործունեության իրականացման աջակցությունը,

3. Սույն կարգում թվարկված կամավոր խնդիրները սպառիչ չեն:

4.Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են հետևյալ սեփական լիազորությունները՝

1) միջոցներ են ձեռնարկում հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին (զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների և այլն)՝ սոցիալական օգնության տրամադրման համար,

2)կազմակերպում են համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքը.

3)խթանում են գրադարանային կառույցների և ենթակառուցվածքների ստեղծմանը, ինչպես նաև գրադարանային գործի զարգացմանը միտված ծրագրերին.

4)աջակցում են համայնքում երիտասարդության դերի բարձրացմանը, երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը,

5)աջակցում են համայնքում արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը,

6)աջակցում են համայնքում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը,

7) կազմակերպում են հանգստի, հանրային վայրերի, մարզական հրապարակների, հանգստի գոտիների խնամքը և պահպանումը.

8)աջակցում են համայնքի ուսումնական հաստատությունների գործունեությանը,

9)աջակցում են քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.

10)աջակցում են սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարության և կապիտալ նորոգման իրականացմանը,

11)կազմակերպում են համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը,

12)իրականացնում են համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բարեկարգման աշխատանքները,

13)կազմակերպում է գյուղատնտեսական զարգացման ծրագրերի իրականացման աշխատանքները,

14)աջակցում են համայնքում տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերին և նրանց գործունեության իրականացմանը:

5.Մինչև համայնքի տվյալ տարվա բյուջեի հաստատումը, համայնքի ղեկավարը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեից ֆինանսավորում պահանջող կամավոր խնդիրների իրականացման նպատակով, տվյալ տարում իրականացվելիք կամավոր խնդիրների ցանկը և դրանց կատարման համար անհրաժեշտ ծախսերը:
6.Համայնքի ավագանին, ելնելով համայնքի բյուջեի հնարավորություններից, որոշում է տվյալ տարում կամավոր խնդիրների համար հատկացվող ընդհանուր գումարի և յուրաքանչյուր կամավոր լիազորության իրականացման համար անհրաժեշտ հատկացման չափը, ընդ որում յուրաքանչյուր տարվա համար հատկացվող ընդհանուր ֆինանսական միջոցները չեն կարող գերազանցել համայնքի այդ տարվա բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 10%-ը:

7.Համայնքի ավագանու որոշմամբ ընթացիկ տարում կամավոր խնդիրների լուծման նպատակով հատկացված ընդհանուր գումարի սահմաններում մի կամավոր խնդրի լուծման

համար հատկացված գումարը կարող է ուղղվել մեկ կամ մի քանի այլ կամավոր խնդիրների իրականացմանը:

8. Համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական և գույքային միջոցներ չպահանջվելու դեպքում համայնքի ղեկավարը դրանք կարող է իրականացնել ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

9. Հրատապ լուծում պահանջող դեպքերում համայնքի ղեկավարը իրավունք ունի համայնքի սեփական լիազորության իրականացման համար ֆինանսական միջոցներ հատկացնել ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, այդ մասին հաղորդում տալով առաջիկա ավագանու նիստում:

10. Կամավոր խնդիրների և դրանց լուծման իրականացման հետ կապված առաջարկություններ կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

11. Խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են, նախաձեռնողը համայնքի ղեկավարի քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը:

12.Համայնքի ղեկավարը առաջարկությունը և կից ներկայացված փաստաթղթերն ստանալուց հետո՝

1)առաջարկությանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է, դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ գումարի չափը և առաջարկությունը նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերի և ավագանու որոշման համապատասխան նախագծի հետ ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը՝ արդյունքների մասին տեղեկացնելով նախաձեռնողին: Անհրաժեշտության դեպքում ավագանու նիստին կարող է հրավիրվել նախաձեռնողը,

2)առաջարկությանը չհամաձայնելու դեպքում համայնքի ղեկավարը նախաձեռնողին գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով դրա պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13. Սույն կարգի համաձայն համայնքի ավագանուն ներկայացված կամավոր խնդրի լուծման հարցը քննարկում է ավագանու նիստում և ընդունում է համապատասխան որոշում՝ կամավոր խնդրի լուծման իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

14.Համայնքի կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ավագանին կարող է ստեղծել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

15.Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների՝ սույն կարգով չկարգավորված հարցերը կարող են կարգավորվել միայն համայնքի ավագանու առանձին որոշումներով:

Հավելված N 2
Նոր Գեղի համայնքի ավագանու
2019 թվականի օգոստոսի 5-ի N 4 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի կողմից սոցիալական աջակցություն տրամադրվում է համայնքի բնակիչների դիմումների հիման վրա համայնքի ղեկավարի որոշմամբ: Սոցիալական աջակցության տրամադրման անհրաժեշտ նախապայմաններն են.

1)համայնքի բնակիչ հանդիսանալը,

2)սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտք չունենալը,

3)համայնքապետարանում գործող՝ համայնքում սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ դրական եզրակացությունը:

2. Համայնքի բնակիչների սոցիալական խնդիրների վերհանման, համայնքի ղեկավարին ուղղված սոցիալական բնույթի դիմումների քննարկման, դիմումներում ներկայացված խնդիրների և դիմումատուների կյանքի պայմանների ուսումնասիրության նպատակով ստեղծված Հանձնաժողովը ուսումնասիրում է ներկայացված դիմումը և տալիս համապատասխան եզրակացություն:

3. Հրատապ լուծում պահանջող առանձին դեպքերում համայնքի ղեկավարը կարող է կայացնել սոցիալական օգնության հատկացման որոշումներ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

4. Սոցիալական աջակցությունը ըստ հնարավորության կարող է տրամադրվել դրամական օգնության տեսքով:

5. Սոցիալական աջակցության տրամադրման որոշումներ կայացնելիս գործում են հետևյալ չափորոշիչները՝

1)զոհված,հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներ,

2)բազմազավակ ընտանիքներ /3 և ավելի անչափահաս երեխա ունեցող/,

3) միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաներ ունեցող անապահով ընտանիքներ,

4)1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և հաշմանդամ ծնողներ կամ երեխաներ ունեցող անապահով ընտանիքներ,

5) գործազուրկ կարգավիճակ ունեցող անապահով անձինք,

6)առողջական խնդիրներ ունեցող /վիրահատության կամ թանկարժեք բուժման ենթակա/ անապահով անձինք,

7) համայնքում յուրաքանչյուր նորածին երեխայի ընտանիքին հատկացնել միանվագ դրամական օգնություն:

8)ընտանիքի անդամի հուղարկավորության կազմակերպման համար դրամական օգնության կամ տրանսպորտի տրամադրման խնդրանքով դիմած անապահով անձինք,

9)սոցիալապես խոցելի խմբեր և այլ դեպքեր:

6. Սոցիալապես անապահով ընտանիքներին կամ անձանց հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 100 հազար դրամ: Նույն ընտանիքին կամ անձին տարվա ընթացքում սոցիալական օգնություն կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ:

7. Առանձին բացառիկ դեպքերում Հանձնաժողովի առաջարկության հիման վրա համայնքի ղեկավարը կարող է կայացնել սոցիալական օգնության՝ սույն կարգով չնախատեսված եղանակով և չափով տրամադրման որոշումներ, այդ մասին հաղորդում տալով առաջիկա ավագանու նիստում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2019 թվականի N 45

## <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ և ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի պահանջներով Նոր Գեղի համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղիի Կոմունալ սպասարկում և բարեկարգում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակել Սևադա Աշոտի Ասատրյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

կողմ (10) դեմ (0) ձեռնպահ (0)

Վանիկ Ավալյան

Անահիտ Առաքելյան

Արմեն Բաբախանյան

Վահագ Գևորգյան

Գագիկ Գևորգյան

Վլադիկ Գրիգորյան

Մանյա Կիրակոսյան

Շիրալի Մամոյան

Մարիա Մկրտչյան

Նաթելա Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրունզիկ Մնոյանի 64.094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

09 օգոստոսի 2019 թվականի N 46

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ, ԱՆՇԱՐԺ ԵՎ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի դրույթների, Նոր Գեղի համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով անկախ գնահատող <<Աշոտ Հովհաննիսյան>> Ա/Ձ-ի եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Նոր Գեղի համայնքի ավագանին որոշում է՝

1.Համաձայնություն տալ Նոր Գեղի համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով հետևյալ հողատեսքերը օտարելու համար՝

1.1 Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի (կադաստրային ծածկագիր՝ 07-048-0066-0048) 0,015554 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման:

Մեկնարկային գինը հաստատել 500000 (հինգ հարյուր հազար) դրամ, մեկնարկային քայլը՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ:

1.2 Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի (կադաստրային ծածկագիր՝ 07-048-0017-0029) 0,023388 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման:

Մեկնարկային գինը հաստատել 1000000 (մեկ միլիոն) դրամ, մեկնարկային քայլը՝ 50000 (հիսուն հազար) դրամ:

1.3 Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի (կադաստրային ծածկագիր՝ 07-048-0270-0111) 2,1238 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության ջրովի վարելահող:

Մեկնարկային գինը հաստատել 4700000 (չորս միլիոն յոթ հարյուր հազար) դրամ, մեկնարկային քայլը՝ 235000 (երկու հարյուր երեսունհինգ հազար) դրամ:

սեփականություն հանդիսացող Մերսեդես-Բենզ ՄԼ 320 մակնիշի, 492 ԼԼ 17 պետհամարանիշի մարդատար ավտոմեքենան:

Մեկնարկային գինը հաստատել՝ 590.000 /հինգ հարյուր իննսուն հազար/ դրամ, մեկնարկային քայլը՝ 29500 (քսանինը հազար հինգ հարյուր) դրամ:

3. Աճուրդի մասնակցության վճարի չափը 5000 (հինգ հազար) դրամ է:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

կողմ (10) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Վանիկ Ավայան

Անահիտ Առաքելյան

Արմեն Բաբախանյան

Վահագ Գևորգյան

Գագիկ Գևորգյան

Վարդիկ Գրիգորյան

Մանյա Կիրակոսյան

Շիրակ Մամոյան

Մարիա Մկրտչյան

Նարինե Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք.Ֆրունզիկ Մնոյանի 64,094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 օգոստոսի 2019 թվականի N 47

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 4-րդ հոդվածի՝ Նոր Գեղի համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Նոր Գեղի համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

կողմ (10) դեմ (0) ձեռնպահ (0)

Վանիկ Ավալյան

Անահիտ Առաքելյան

Արմեն Բաբախանյան

Վահագ Գևորգյան

Գագիկ Գևորգյան

Վարդիկ Գրիգորյան

Մանյա Կիրակոսյան

Շիրակ Սամոյան

Մարիա Մկրտչյան

Նաթելա Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

# ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

Վարման սկիզբը «______» ___________ 20___թ

1. Տեղական վճարի տեսակը՝ ____________________

2. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ստորագրությունը )՝ ____________________

| N | Տեղական վճար վճարողի | | | Տեղական վճար վճարողի հաշվառման հասցեն | Տեղական վճարի չափը | Ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական վճարը | Տեղական վճարի արտոնությունը և տրամադրման հիմքը (առկայության դեպքում) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Անունը | Ազգանունը | Հայրանունը՝ լինելու դեպքում | | | | |
| 1 | 2 | | | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | | | | | | | |
| 2 | | | | | | | |
| 3 | | | | | | | |
| 4 | | | | | | | |
| 5 | | | | | | | |
| 6 | | | | | | | |
| 7 | | | | | | | |
| 8 | | | | | | | |
| 9 | | | | | | | |
| 10 | | | | | | | |
| 11 | | | | | | | |
| 12 | | | | | | | |
| 13 | | | | | | | |
| 14 | | | | | | | |

Ձև 2

# ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ (ԿԱՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ)

Վարման սկիզբը « _______ » ____________ 20___թ

1. Տեղական վճարի տեսակը՝ ____________________

2. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ստորագրությունը)՝ ____________________

| N | Տեղական վճարի վճարող իրավաբանական անձի(կամ անհատ ձեռնարկատիրոջ) | | Գրանցման հասցեն | Գործունեության հասցեն | Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | Տեղական վճարի չափը | Ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական վճարը | Տեղական վճարի արտոնությունը և տրամադրման հիմքը (առկայության դեպքում) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Կազմակերպաիրավական տեսակը | | | | | | |
| 1 | 2 | | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | | | | | | | | |
| 2 | | | | | | | | |
| 3 | | | | | | | | |
| 4 | | | | | | | | |
| 5 | | | | | | | | |
| 6 | | | | | | | | |
| 7 | | | | | | | | |
| 8 | | | | | | | | |
| 9 | | | | | | | | |
| 10 | | | | | | | | |
| 11 | | | | | | | | |
| 12 | | | | | | | | |
| 13 | | | | | | | | |
| 14 | | | | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրունզիկ Մնոյանի 64,094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

09 օգոստոսի 2019 թվականի N 48

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 37-րդ կետի, քննարկելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կողմից 2019 թվականի մայիս ամսին Նոր Գեղի համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրության տվյալները՝ Նոր Գեղի համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Նոր Գեղի համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրության տվյալները:

կողմ (10) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Վանիկ Ավագյան_______________

Անահիտ Առաքելյան_______________

Արմեն Բաբախանյան_______________

Վահագ Գևորգյան_______________

Գագիկ Գևորգյան_______________

Վարդիկ Գրիգորյան_______________

Մանյա Կիրակոսյան_______________

Շիրազի Մամոյան_______________

Մարիա Մկրտչյան_______________

Նաթելա Շմավոնյան_______________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ